

# ՇԱՀԷ ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ՝ ՓԻՒՆԻԿԵԱՆ ԱՓԵՐՈՒ ՆԿԱՐԻՉԸ

*Posted on July 25, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Տիկնոջ՝ Կիւլէնի յիշատակին****Դոկտ. Միւսա Գոճայեան, Լոս Անճելըս, 13 Յուլիս, 2022**

Լիբանանը հազարաւոր հայերու համար եղաւ ծննդավայր, ապա որքան հասունցանք եւ երգեցինք «[Բոլորս հայրենիքին համար](#)»ը, մայրիներու երկիրը եղաւ նաեւ հայրենիք: Մեր անոյշ մանկութիւնն ու արկածախնդիր պատանեկութիւնը անցաւ սոճիներու եւ սոճիներու սոսափիւններուն հետ, քնացանք ծղրիղներու օրօրին տակ եւ ծովը սիրեցինք՝ մկրտուելով Միջերկրականին մէջ:

**Շահէ եւ Կիւլէն Տէր Պօղոսեաններ**

Այս աստուածաշնչային երկրի նկարիչն է Շահէ Տէր Պօղոսեան: Մի քանի տարի Նոյն գրասեղաններու վրայ կրթութիւն եւ դաստիարակութիւն ստացանք ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանէն ներս, ուր մեր գեղագիտական, մանաւանդ նկարչական ճաշակը ծաղկեցաւ նախ Փօլ Կիրակոսեանի ապա նաեւ մասամբ Պրն. Վազգէն Թիւթիւնճեանի շունչին տակ:

Շահեն Փոլ Կիրակոսեանէն լսեց հետեւեալ խօսքերը թէ՛ «գոյնը հոգիին հայելին է, իսկ գիծերը՝ մեր միտքերը», ու թէեւ համալսարանական կրթութիւնը ստացաւ նախ Հայկազեան գոլէճէն (այժմ համալսարան) ապա Ամերիկեան Համալսարանէն ներս՝ վկայուելով առեւտրական վարչագիտութեան մէջ, սակայն գեղանկարչութիւնը դարձաւ կեանքի իմաստ: Արուեստի հանդէպ արհեստավարժութիւնը արմատաւորուեցաւ նաեւ այն տարիներուն, երբ ան հետեւեցաւ լիբանանեան համալսարանի գեղարուեստից բաժնին (երկու տարի):



### **Մայրիներու երգը**

Ջրաներկն ու ներկամատիտը (փասթել) իր արտայայտչամիջոցներն են, վրծիւր՝ գործիքը, պաստառն ու թուղթը՝ բնակարանը, որ կը հիւրասիրէ Շահեի տաղանդը:

Շահեն լուռ ու մունջ նկարած է եւ կը նկարէ, կը գծէ, ջրաներկի գոյներուն կեանք ու հոգի կու տայ եւ սպիտակին վրայ կը յայտնուին Փիլիսկեան լեռներու սոճիներն ու մայրիները, հովիտները, ձորերն ու անդունդները, որոնք հիւրընկալ գիրկեր են կարծես, այլ ոչ թէ մարդակուլ վիհեր: Ամէն ինչ գեղեցիկ է Շահեին համար: Մինչ մարդիկ յաճախ անտարբեր կ'անցնին սոճիներու քովէն կամ կը վայելեն անոր շուքը, բայց յաճախ չեն նկատեր աստուածային արարչագործութեան գեղեցկութիւնն ու կատարելութիւնը անոր մէջ, Շահեն անոնց կու տայ գեղատեսիլ հմայք մը, հիւրընկալ հսկայ մը (նայիլ

«Սոճիներու երգը»):



### **Չահլէի Մեղեդին**

Լիբանանի արուեստասերներն ու յատկապէս գեղանկարչութեան սիրահարները գնահատած են Շահէի գործերը, որոնցմէ երկուքը զետեղուած են Լիբանանի մշակոյթի նախարարութեան արուեստի հաւաքածոյին մէջ, պաստառ մը մաս կը կազմէ Անթիլիասի մայրավանքին արուեստի հաւաքածոյին, բազմաթիւ նկարներ կը գտնուին լիբանանցի եւ օտարազգի արուեստասեր հաւաքողներու մօտ:

45 տարիներու նկարչական բեղուն գործունեութեան ապացոյց են իր մասնակցութիւնը 68 հաւաքական ցուցահանդէսներու եւ 13 գիտական համագումարներու:



### **Պիպլոսի հին նաւահանգիստը**

Անվարան կարելի է ըսել՝ Շահէնը Լիբանանն է, Լիբանանը՝ Շահէն: Արդարեւ իր համակ սերը հանդէպ լիբանեան հրաշակերտ բնութեան եւ մարդակերտ տուներուն, այգիներուն եւ ծովեզերեայ հրաշալիքներուն՝ ցոյց կու տան թէ գործ ունինք վաւերական գեղանկարիչի մը հետ, որ սիրահարած է Լիբանան հայրենիքին: Վերջին տասնամեակներուն Միջին Արեւելքի այս չքնաղ երկրի քանդումները, եղբայրասպան կռիւները, հարեւան երկրի դրդած խժոժութիւնները չեն վիատեցուցած զինք, այլ ան իր վերաբերմունքը ցոյց տուած է կատաղօրէն նկարելով գիւղերը, շինութիւնները, լեռնային կաճանները, աղբիւրները, փոքրիկ եւ հիւրընկալ նաւահանգիստները (նկարներ՝ Պիպլոս եւ Այն Մրէյսէ): Կանաչն ու աշնան գոյները համերաշխօրէն կ'ապրին կողք կողքի եւ հակադրամիասնակութիւնը կը վերածուի հոգեկան խաղաղութեան: Լեռնալանջերու վրայ սփռուած կղմիւտրաւոր տունները, կամարակերտ երկյարկանի առանձնատունները զիրար կ'ամբողջացնեն եւ հրաւեր մը կը դրկեն երկրէն ականմայ դուրս գնուող լիբանանցիին ու կը խորանայ թախիժն ու կարօտը:

Երկար, առողջ եւ ստեղծագործ կեանք կը մաղթեմ դասընկերոջս, որմէ կարօտս մասամբ կ'առնեմ իր նկարները դիտելով ու ըմբռնելով:



**There are no comments yet.**